

## Միջազգային գիտաժողով Երևանում

Հունիսի 1-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ պատմության ինստիտուտի տնօրինության և Նոր պատմության բաժնի կազմակերպած «Վերակազմյալ հնչակյան կուսակցության հիմնադրման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170-ամյակներին նվիրված» միջազգային գիտաժողով:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Գիտաժողովը ողջունեց և բեղմնավոր ընթացք մաղթեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Մուխարյանը:

Առաջին նիստը նախագահում էր պզո, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանը:

«Ա. Արփիարյանը «Մշակի» թղթակից» հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանը: «Մ. Տամատյանի և Ա. Արփիարյանի գաղափարական ներհակությունները» թեմայով փաստահարուստ հենքով և գիտական արդիականությանը առանձնացող զեկուցումով հանդես եկավ պրոֆեսոր Ս. Սարգսյանը: Այնուհետև «Ա. Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը» թեմայով զեկուցումներ կարդացին դոցենտներ Գ. Հովհաննիսյանը, «ԱՄՆ-ում Հայաստանի Առաջին հանրապետության ռազմական առաքելության գործունեության լուսաբանումը հնչակյան մամուլի էջերում» թեմայով Ա. Ղանթարյանը, «Արևմուտքում հայ առաջին լոբբիստական կազմակերպությունների հիմնադիր, Վերակազմյալ հնչակյան Միհրան Սվազյանը Հայաստանի ռազմավարական կողմնորոշման մասին» թեմայով Զ. Ավագյանը:

Այնուհետև գիտաժողովում հեռավար ձևով «Հնչակեան կուսակցութեան կազմաւորման ակունքների խմբանկարի մը պատմութիւնը եւ Ժընեւի «Յեղափոխական ընկերութեան» ձեւաւորման Թուսկանը» զեկուցումով հանդես եկավ Ծվեյցարիայի կրոնների խորհրդի գլխավոր քարտուղար, Աստվածաբանության և փիլիսոփայության դոկտոր Արել Մանուկեանը և «Արմենականները. Վերլուծութիւն կազմակերպութեան առաջին շրջանակի վիճակագրական աղիւսակի (1906 թ. առաջին կիսամեակ) թեմայով Բեյթութի Հայկազյան համալսարանի դոկտոր Ա. Տազետեանը:

Երկրորդ նիստը նախագահում էր պրոֆեսոր Լաուրա Մուրադյանը:

Լսվեցին հետաքրքիր և նորություններով հարուստ զեկուցումներ: Մասնավորապես՝ պզթ. Կ. Մկրտչյանի «Հնչակյան կուսակցության մասնակցությունը 1905-1911 թթ. սահմանադրական հեղափոխությունը իրանահայ գաղթօջախում», դոցենտ Հ Մուքիսայանի «Հայ ժողովրդական կուսակցության «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևի ճակատագրի շուրջ», պզթ. Ա. Կարապետյանի «Դրվագներ Վան-Վասպուրականում հնչակյանների, արմենականների և դաշնակցականների գործունեությունից» պրոֆեսորներ Ա. Ասատրյանի «Արփիար Արփիարյանը և Կոմիտասը», Լ. Մուրադյանի «Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց» վեպը», Ս. Հովհաննիսյան «Արփիար Արփիարյանը արևմտահայ գրողների նամականիում», բզթ Լ. Ղանդյանի «Իմաստափոխությունը հազուստ իմաստային դաշտում» և այլ զեկուցումներ:



## «Գլաձոր» համալսարանը 30-ամյակին նվիրված հորեյանական գիտաժողով

Խորհրդային միության փլուզումից հետո նորանկախ Հայաստանի կյանքի բոլոր ոլորտում իրականացվում էին հիմնարար փոփոխություններ: Իրար հետևից հիմնադրվող մասնավոր բուհերի առաջնեկ «Գալիքից» հետո երկրորդը «Գլաձոր» համալսարանն էր: Հիմնադիրներն էին Ժ. Ջհանգիրյանն ու Ա. Խառատյանը: Առաջին տասնամյակում համալսարանը գործեց Երևանի Շահումյանի անվան դպրոցի շենքում, իսկ XXI դարի սկզբից՝ ընդարձակ, լուսավոր և բոլոր հարմարություններով օժտված սեփական հարկի ներքո: Ի սկզբանե հավատարիմ մնալով միջնադարյան նախնիի ավանդույթներին, այն դարձավ երեց եղբոր՝ Վայոց ձորում գործած և իր ժամանակի ստեղծագործական մտքի զարգացման կենտրոն «Գլաձորի» ժառանգորդը:



Ձեռքբերումների բեղմնավոր պաշարով համալսարանը տոնեց գործունեության 30-ամյակը: Հորեյանական օրը մեկնարկեց նաև «Գլաձոր-30» գիտաժողովը, որի պլենար նիստում «Կիլիկիայի անկախության շարժումը և քաղաքական դասերը» հետաքրքիր և բովանդակալից զեկուցումով հանդես եկավ պգդ, պրոֆեսոր Սուրեն Սարգսյանը և «Կ.Պոլսի «արևելյան» թիվ 687 օթյակի հայ դեմքերը» թեմայով՝ պգդ, պրոֆեսոր Ֆելիքս Մովսիսյանը: Այնուհետև գիտաժողովը շարունակվեց մի քանի սեկցիաներում:



Համալսարանի 30-ամյա հորեյանը լավագույնս տոնելու և բուհի պրոֆեսորադասախոսական կազմի երկարամյա, անմնացորդ նվիրումն արժևորելու համար ՀՀ նաագահ Արմեն Սարգսյանի հրամանագրով «Գլաձորի» ռեկտոր, իգդ, պրոֆեսոր Ժորա Ջհանգիրյանին շնորհվեց «Մխիթար Գոշ» մեդալ, պրոֆեսորներ Արծրուն Էդիսյանը, Սուրեն Սարգսյանը և դոցենտներ Լիլիթ Սահակյանն ու Արմեն Քինակցյանը արժանացան ԿԳՄՍ նախարարության ոսկե մեդալի: Մի շարք այլ աշխատակիցներ էլ արժանացան ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Գլաձոր» համալսարանի ոսկե մեդալի, պատվոգրերի և շնորհակալագրերի:

Գիտաժողովում լավեցին շատ այլ հետաքրքիր զեկուցումներ: Մասնավորապես՝ պրոֆեսորներ Ժ. Ջհանգիրյանի «Մահմանադրացված կյանքի լեգիտիմությունը», Ա. Սարգսյանի «Եվս մեկ անգամ հայ ժողովրդի պատմության մեջ քրիստոնեության և եկեղեցու կատարած դերի մասին», Դ. Գասպարյանի «Գրական խմբակցությունների և գրապայքարի պատմությունը 1920-1930-ական թթ.», դոցենտներ Ս. Մանուկյանի «Ռաֆայել Լեմկինը և «ցեղասպանություն» եզրույթը», Ս. Սուքիասյանի «Փողի, վարկի օգտագործման և զնի փոփոխության մասին» և այլն: Գրեթե բոլոր զեկուցումները լավեցին հետաքրքրությամբ, իսկ վերջում տրվում էին խելացի հարցեր, ծավալվում աշխույժ մտքերի փոխանակություն: Գիտաժողովն անցավ ակտիվ ստեղծագործական մթնոլորտում:

Հաղորդագրությունները կազմեց՝ պգդ, պրոֆեսոր **Սուրեն Թ. Սարգսյանը**